Եղիշե Չարենց

Կատուներն ու ես

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում,
Որ ես իզուր վիրավորում եմ իմ խեղճ
Ու խայտառակ գոյությամբ
Վեհությունը աշխարհի...

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում...
Եվ ո՞վ ասաց. մի կատու,
Որ գարնան դեմ, սիրակարոտ մլավելով,
Երազում էր տա՛ք զգվանքներ ու խնդում:
Նա նստել էր կտուրին,
Ուր իր մրսած կողերն հողին քսելով,
Մլավելով աղիողորմ,
Կանչում էր որձ կատուների, որ, ավա՛ղ,
Չկային...

Գարնան արևն իրիկնային
Գցել էր պաղ մի ճառագայթ կողերին,
Ու արևի տակ գարնան
Տաքանում էր կարոտը ո՛րբ կողերի...

Ու կատվային աչքերում,
Արդեն մարող ճառագայթի նման խեղճ,
Հուրհուրում էր վերջին տագնապը սիրո,

Որ դեռ մխում էր ցամաքած սրտի մեջ:

Երկա՛ր, երկա՛ր մլավում էր հուսահատ:
Եվ որպես սև դառնություն
Այդ աղեխարշ մլավյունը իրիկվա
Հոսում էր վար կտուրից,
Որպես թախիծ, որպես թույն...

Նայում էի ես երկա՛ր:
Լո՛ւռ էր այնպես: Ու միայն ջուրն էր կաթում,
Երբ դիմացի կտուրից,
Գաղտագողի մոտենալով
Ցատկեց հանկարծ մի կատու:

Դեռ չէր տեսել: Բայց հանկարծ
Նա նկատեց ու մլավյունը խղճուկ
Փոխվեց մի սուր, արնափրփուր խնդության:
Եվ իրարու մոտեցած,
Արդեն մարող լույսերի տակ արևի,
Նրանք իրար միացան,
Չիմանալով, որ նայում է մի չար աչք
Ներքևից...

Հետո... ների՛ր ինձ, երկի՛նք,
Որ հալիլոցը գարնան
Ու տեսարանը հեթանոս այդ սիրո
Մեջս շարժեց չար մի կիրք...
Եվ ես հանկարծ,
Ի՜նքս էլ դեռ լավ չհասկացած, թե ինչու,
Վերցրեցի մի բուռ ձյուն
Ու խփեցի կատուներին սիրարծարծ...

Եվ ա՜յդ պահուն միայն ես

Նկատեցի, որ եթե
Ես պատահմամբ այդ չար քայլը չանեի
Սիրով տարված կատուները կտուրից
Պիտի գետին ընկնեին...
Սակայն իմ թաց ձյունագնդից արթնացած,
Սուր զայրացած, որ չթողին որ խաղան
Նրանք ահեղ մլավեցին դեպի ցած
Ու փախան...
* * * * * * * *

Ո՛վ երկինք,
Ների՞ր, որ ես ոչնչի չե՛մ պետք եկել,
Որ կյանքս ողջ երգ է եղել ու քամի...
Բայց մի անգամ, միայն մի,
Երբ գարուն էր, հալիլոց
Ես փրկել եմ թեկուզ կամքիս հակառակ
Երկու կատվի... կտուրից վայր ընկնելուց...

1922